

11437

3107
4-70

25 SEP 2006
1 DEC 2009

Խ (Բ) ԿԵՆՏՐԱԼԻ ՏԵԿՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ ՄԵԹՈԴՐԱՅԻՆ ԻՆՏԻԹԵՆՍԻՎՈՒՄ

Ա.Ռ.Ս.ՋԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ВИДНОСТЕН
ИНСТИТУТ
ВОСТОКОВЕДЕНИЯ
Ленинградский Наук

ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԱՄԲՈՂՁ ՑԱՆՑԻ ՀԱՄԱՐ

Թ Ե Մ Ա. — ԿԱՊԻՏԱԼԻԶՄԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՃԳՆԱԺԱՄԸ

I. ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ՄԻՍՏԵՄԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՃԳՆԱԺԱՄԸ, ՎՈՐՊԵՍ ԿԱՊԻՏԱԼԻԶՄԻ ԲՈԼՈՐ ՀԱԿԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾԱՅՐ ԱՍՏԻՃԱՆԻ ՄՐՄԱՆ ՀԵՏԵՎԱՆԲ

1. 1914—1918 թ. թ. Իմպերիալիստական պատերազմի ծագման պատճառները: 1914—1918 թ. թ. Իմպերիալիստական պատերազմը, չորրպես կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամի ըսկզբը:

2. Իմպերիալիստական յերկրների միջև յեղած հակասությունների սրումը՝ կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամի դարաչրջանում:

3. Իմպերիալիստական յերկրների և գաղութների ու կախում ունեցող յերկրների միջև յեղած հակասությունները կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամի դարաչրջանում:

4. Կապիտալիզմի նեխման և պարագլխիզմի ուժեղացումը կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամի դարաչրջանում:

5. Դասակարգային հակասությունները և դասակարգային պայքարը կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամի դարաչրջանում:

II. ՅԵՐԿՈՒ ՄԻՍՏԵՄՆԵՐԻ ՊԱՅԲԱՐԸ, ՎՈՐՊԵՍ ԿԱՊԻՏԱԼԻԶՄԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՃԳՆԱԺԱՄԻ ԱՄԵՆԱԳԼԻՍՎՎՈՐ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆ

1. Հոկտեմբերյան հեղափոխությունը և համալսարհային անտեսության պատկառումը:

2. Սոցիալիստական սխտեմի պայքարը կապիտալիստականի հետ:

3. Սոցիալիզմի հաղթական կառուցումը ԽՍՀՄ-ում: Կապիտալիստական սխտեմի կործանման և սոցիալիստական սխտեմի հաղթանակման անխուսափելիությունը:



**III. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՃԳՆԱԺԱՄԻ ԴԱՐԱՅՐՁԱՆԻ ԿԱԴԻՏԱ-
ԼԻՋՍԻ ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՆ ԱՌԱՆՁՆԱՎԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ
ԵԿՈՆՈՄԻԿԱՅՈՒՄ ՅԵՎ ԲԱՂԱԲԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ**

1. Կապիտալիստական ձեռնարկույթյունների խրոնիկական թերաբեռնավորումը:
2. Ռեզերվային արդյունաբերական բանակի՝ գործազուրկների մշտական բանակ դառնալը:
3. Ազրաբային ճգնաժամը, վորպես կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամի բարկացուցիչ մասը:
4. Անցումը բուրժուական դեմոկրատիայից դեպի ֆաշիստական դիկտատուրայի:
5. Սոցիալ-ֆաշիզմը, վորպես բուրժուազիայի գլխավոր սոցիալական հենարանը:

**IV. ԼԵՆԻՆՆ ՈՒ ՍՏԱԼԻՆԸ, ՎՈՐԴԵՍ ԿԱԴԻՏԱԼԻՋՍԻ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՃԳՆԱԺԱՄԻ ԹԵՈՐԻԱՅԻ ՍՏԵՂՇՈՂՆԵՐ**

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԿՆԴԻՐՆԵՐԻ ՀԱՄԱՐ

1. Աշխատանքային նյութ №1 և № 2:
2. Լենին — Չեկուցում միջազգային դրույթյան և Կոմինտերնի հիմնական խնդիրների մասին՝ Կոմունիստական Ինտերնացիոնալի 2-րդ կոնգրեսում 1920 թ. հուլիսի 19-ին. յերկերի լրիվ ժողովածու. 25-րդ հատոր, 2-րդ կամ 3-րդ հրատարակույթյուն, Էջ՝ 331—347 կամ ընտիր յերկեր (վեցհատորյա) 5-րդ հատոր, Էջ՝ 501—516:

ԽՄԲԱԿԱՎԱՐՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Լրացուցիչ

1. Ստալին. — Հաջիետու ղեկուցում Համկոմկուսի (բ) 16-րդ համադումարին, 1-ին բաժին:
2. Լապիդուս և Ոստրովիտյանով — Քաղաքատնտեսույթյան 7-րդ հրատարակույթյուն, 2-րդ մաս, գլուխ XLVII-րդ և XLVIII-րդ, Էջ՝ 207—241:

ԻՆՔՆԱՍՏՈՒԳՄԱՆ ՀԱՐՑԵՐ

1. Ինչո՞ւ 1914—1918 թ. թ. իմպերիալիստական պատերազմը կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամի սկիզբ գրեց:
2. Ինչո՞ւմն և կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամի էյուրթյունը:

3. Ինչո՞վ և բացատրվում դասակարգային հակասույթյունների սրումը կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամի դարաչրջանում:

4. Ինչո՞վ կարելի յե աղացուցել կապիտալիզմի նեխման և պարագլխիզմի ուժեղացումը նրա ընդհանուր ճգնաժամի շրջանում:

5. Ինչո՞ւ համաշխարհային տնտեսույթյան պատակումը և յերկու սխտեմների պայքարը հանդիսանում և կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամի ամենագլխավոր արտահայտույթյունը:

6. Գալույթներում և կախում ունեցող յերկրներում աղբային-ազատագրական շարժման վրա ի՞նչ աղբեցույթյուն են թողել 1914—1918 թ. թ. իմպերիալիստական պատերազմը և պրոլետարական հեղափոխույթյան հաղթանակը ՌՍՀՄ-ում:

7. Վորո՞նք են ընդհանուր ճգնաժամի դարաչրջանի կապիտալիզմի կարևորագույն ստանձնահատույթյուններն և կոնոմիկայում և քաղաքականույթյան մեջ:

8. Ինչո՞վ կարելի յե աղացուցել կապիտալիստական սխտեմի կործանման և սոցիալիստական սխտեմի հաղթանակման անխուսափելիույթյունը:

ՄԵԹՈԴԱԿԱՆ ՑՈՒՑՄՈՒՆՔՆԵՐ

Խմբակավարները յերրորդ բաժինը մշակելիս, ունեկելրներին պետք և ծանոթացնեն հետպատերազմյան կապիտալիզմի յերեք շրջանների հետ, տալով նրանց բնույթաղբիրը: Բացի դրանից խմբակավարները պետք և սամ կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամի հարցում հակալենինյան կոնցեպցիաների ծավալուն քննադատույթյունը:

Առաջադրուքյունը կազմեց՝ Կ. ՆիկիՆ

ԻՆՉ Ե ԿԱՊԻՏԱԼԻԶՄԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԶԳՆԱԺԱՄԸ

1914-1918 թվականների պատերազմից հետո կապիտալիզմն արժատապես տարբեր է մինչպատերազմյան կապիտալիզմից: Վորովհետև համաշխարհային խմբերիալիստական պատերազմը և նրա առաջացրած սոցիալիստական հեղափոխությունը Ռուսաստանում «ցնցեց համաշխարհային կապիտալիզմի ամբողջ սխառնը և սկիզբ դրեց նրա ընդհանուր ոչնչմանը», — ասվում է Կոմինտերնի ծրագրում:

Բուրժուազիան մտադրվել էր պատերազմի ոչնչությանը լուծել մի շարք հիմնական հակասություններ, վորոնք կուտակվել էին խմբերիալիզմի տնտեսական զարգացման ընթացքում: Սակայն իրականում պատերազմը չլուծեց և չէր էլ կարող լուծել այդ հակասություններից և վոչ մեկը: Դեռ ավելին, նա արդեն իսկ գոյություն ունեցող խմբերիալիստական հակասություններին՝ ավելացրեց նորերը:

Պատերազմը ժողովրդական մասսաներին իր հասցրած ծանրը հարվածներով և դրկանքներով ակտիվ քաղաքական կյանքի կռնեց բանվոր դասակարգի նույնիսկ ամենահետամնաց խավերին և բազմամիլիոն գյւղացիական մասսաներին: Նա հակադասական դարկ ավեց հետամնաց գաղութային ժողովուրդների ազատագրական շարժմանը, ներգրավելով նրանց ակտիվ պայքարի մեջ՝ ընդգեծ խմբերիալիստական թարանի և ճնշման: Նա սրեց բոլոր ներխմակերիալիստական հակասությունները, ուժեղացրեց հաղթանակած յերկրների ճնշումն ու ստրկացումը հաղթյած յերկրների և գաղութների նկատմամբ:

Իրա համար ել խմբերիալիստական պատերազմն իրոք յեղել է ըստ Լենինի արտահայտություն, այն մեծ, կարող և ամենագոր «նեխորը», վորը հակադասական ջակերով արագացրել է համաշխարհային պատմության ընթացքը և առավացրել «չբուտենոված ուժգնությունը համաշխարհային ճգնաժամեր, տնտեսական, քաղաքական, ազգային և յնտերնացիոնալ»¹⁾:

Բնութագրելով պատերազմից հետո խմբերիալիզմի հակասությունները, Լենինը Կոմինտերնի յերկրորդ կոնգրեսում ասել է. «... կարիքը, մասսաների քաջբայումն աճել են չլոված կերպով, և ամենից առաջ 1¼ միլիարդ մարդկանց, այ-

11937

սինքն՝ յերկրագնդի ամբողջ ազգաբնակչության 70 տոկոսի նրկատմամբ: Իսկ իրավարանորեն իրավազուրկ ազգաբնակչությանը դադուրթային, կախում ունեցող յերկրներն են, յերկրներ, վորոնց նկատմամբ «մանդատ» է ստրյած Ֆինանսային ազգապետներին... Անհնարին է մեկ ու մի քառորդ միլիարդ մարդկանց սարել այնպես, ինչպես պորկացնել է ուղում նրանց «առաջավոր» և քաղաքակրթյած կապիտալիզմը յիսկ չէ՞ վոր դա յերկրագնդի բնակչության 70 տոկոսն է: Իսկ հարստապույն պետությունների ամենաչնչին մի յամբակ, — Անգլիան, Ամերիկան, Ճապոնիան... այդ 2-3 յերկրներն ի վիճակի չեն կարգազուրկու տնտեսական հարարերությունները և իրենց քաղաքականությունն ուղղում են դեպի՝ Ազգերի Լիգայի դժով իրենց մասնակիցների և յաղքեղների քաղաքականության առաջամանը: Այստեղից ել բղխում է համաշխարհային ճգնաժամը»²⁾:

Իսկ կապիտալիզմի բուն սխառնի ոչնչմանն է, նրա ծայրատած յտրտակման ու քաջբայման ցուցանիչը: Կապիտալիզմը պատերազմից դուրս է յեկել յարիւրթյած, սասանյած, ջարդյած իր բոլոր ողակներում յտրտապույն ճգնաժամով ընդգրկյած: Հոկտեմբերյան հեղափոխությունը Ռուսաստանում՝ իրենով աղարարեց նոր Ֆազար, այն է — կապիտալիզմի ծայրատած յտրտակման փազան:

Կապիտալիզմի բոլոր ներքին և արտաքին հակասությունների հակադասական սրումը հասցրեց այն բանին, վոր խմբերիալիզմի համաշխարհային սխառնից ընկնել սկսեցին նրա թույլ ողակները, վոր ճեղքվել էր սոցիալիստական հեղափոխությունը:

«Այդ եպոխտան, — ասել է Լենինը, — հակադասական փլուզումների, ճգնաժամերի մասսայական ուղղման բունությունը լուծումնելի կպոխան — նա սկսվել է, մենք նրան պարդ տեսնում ենք, — դա միայն սկիզբն է»³⁾:

«Չախ» կրժուկիստների դեմ տարած բանավեճում, վորոնք 1918 թ. սկզբին թեղիս էին առաջադրել՝ «Մոտալուտ դարնան և ամուսն ընթացքում պետք է սկսվի խմբերիալիստական ոխանակ յտրտակումը», Լենինը գրել է, — «վոչ մի լուրջ քաղաքականազես յերկր չի՛ ասի, թե յե՞րբ պետք է սկսվի» «սխառնի» այս կամ այն յտրտակումը (առավել ևս, վոր սխառնի յտրտակումն արդեն սկսվել է, յսկ յոտքը դնում է առանձին յերկրներում պայթյունի մոմենտի մփսին)»⁴⁾:

Կապիտալիզմի յտրտակումն սկսվել է: Նա մասել է իր կործանման ֆազայի մեջ: Սակայն, նրա յտրտակումը չի հանդի-

- 2) Լենին. հատոր XXV, էջ՝ 338, 340:
- 3) Լենին. հատոր XXVII, էջ՝ 350—351:
- 4) Լենին. հատոր XXVII, էջ՝ 507:

1) Լենին. հատոր XXV, էջ՝ 11:



60837-67

անում կարծ, միաժամանակական ակա, նա ընդգրկում է դասակարգային ճակատամարտերի և ժողովրդական սպառնաժամբոյթյունների մի ամբողջ պատմական շրջան:

Յերբ խոսում են կապիտալիզմի ընդհանուր հզնաժամի մասին, ապա ամենից սուաջ նկատի յե անմոլում, վոր սկսվել է նրա խորտակման և կործանման եպոխան՝ ապատամբող պրոլետարիատի և նրա կողմից ղեկավարվող աշխատավոր մասսաների հարվածների տակ, վոր սկսվել է պրոլետարական հեղափոխության եպոխան, վորի հետեանքով կապիտալիզմը հաղթվելու և մոչնչացվելու յե ամբողջ աշխարհում:

Հետո: Կապիտալիզմի ընդհանուր ճղնաժամն արտահայտվում է նրանում, վոր Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո ինպերիալիզմն արդեն իրենից չի Աերկայացնում միասնական համայնապարսիակ սխտոն: Տնտեսության ներխոլո և քայքայող կապիտալիստական սխտոնին հակադրված է հաղթական սոցիալիզմի սխտոնը: Կապիտալիզմի բոլոր ներքին հակասություններին ավելացրել է նոր խորագույն համաշխարհային — պատմական մասշտաբի ու նշանակությամբ հակասություն, այն է՝ իՍՂՄ-ի և կապիտալիստական աշխարհի միջև յեղած հակասությունը:

Դա — յերկու աշխարհների, յերկու յաղերնների, անտեսության յերկու սխտոնների, ճղողության յերկու կենտրոնների հակասությունն է: Նա հանդիսանում է ժամանակակից եպոխայի հիմնական հակասությունը: Ինտեթադրելով այդ հակասության նշանակությունը, բնկ. Ստալինն ասել է 16-րդ համագումարում.

«Ճիշտ է, այդ հակասությունը ներկայիսալիստական կարգի հակասությունն չէ: Նա կապիտալիզմի իր ամբողջությամբ վերցրած և սոցիալիզմ կասուցող յերկրի միջև յեղած հակասությունն է: Բայց այդ չի իսանդարում նրան՝ քայքայել ու սասանել կապիտալիզմի բուն հիմքերը: Դեռ ավելին, նա կապիտալիզմի բոլոր հակասությունները քայքայ և անում միջև արմատները և հավաքում նրանց մի հանդուցի մեջ, դարձնելով նրանց հենց կապիտալիստական կարգերի կյանքի ու մահվան հարց»⁵⁾:

Հակասությունը յերկու յաղերնների միջև չի մանրանում, չի սպառվում: Ընդհակառակը, խորագույն անտեսական ճղնաժամը, վորն ամբողջ բուրժուական եկոնոմիկան գլխաօայր է չուտ ապիտ, բանվոր դասակարգի մրդովմունքների աճումը յեվ ակտիվ յերույթները կապիտալիստական յերկրներում, մի կողմից, և սոցիալիզմի աճող հաչողությունները իՍՂՄ-ում՝ մյուս

կողմից, ե՛լ ավելի յեն խորացնում և որում յերկու աշխարհների հակասությունները: Այդ նշանակում է, վոր կապիտալիստական սխտոնի ճղնաժամն աճում և խորանում է:

Իմպերիալիզմի բոլոր ներքին հակասությունները՝ դասակարգային, ազգային, միջպետական, պարտված և հաղթանակած յերկրների միջև, մետրոպոլիաների և գաղութների միջև, ծայր աստիճանի սրվում և խորանում են այդ հակադրության և յերկու աշխարհների աճող կոնտրաստի վճռական ներգործության տակ:

Մեզ մատ — վերացված և գործադրությունը, աճում են կուլտուրան և աշխատավորների նյութական բարեկեցությունը՝ սոցիալիզմի արտադրողական ուժերի բուռն աճի հիման վրայ: Նրանց մատ — բանվոր դասակարգի կեսը — գործադուրկներ են, մյուս կեսը հարկադրված է աշխատել ամենաաղքատիկ վճարով: Աճում են սովը, աղքատությունը, Փաշիստական դիկտատուրայի ճնշումն ու նշտակությունները:

Մեզ մատ — գյուղացիները կոլանտեսությունների հիման վրա առաջ են գնում ղեպի կուլտուրական ունեւոր կյանքը, ընդ միշտ սղատվելով աղքատությունից և կուլակային ստրկացումից: Նրանց մատ — գյուղացիներն աղքատանում են, քայքայվում, հյուժվում աղքարային ճղնաժամի հարվածների տակ՝ առանց վազվա որվա մորեն հեռանկարի:

Բուրժուական եկոնոմիկայի արտադրողական ուժերը հարկադրված են անգործության մատնել: Չեոնարկությունների արտադրական կարողությունն ողտադործվում է միայն աննշան չափով: Անգործության մատնված արտադրության միջոցները — մի կողմում, գործադուրկ, սոված պրոլետարիների 50 միլիոնանոց բանակը — մյուս կողմում, — ապրես է բուրժուական անտեսության ապշեցուցիչ պատկերը:

Կապիտալիզմի արտադրողական ուժերը գերաճել են կապիտալիստական կիրառման սահմանները: Նրանք ամենաաղաղակող հակասության մեջ են մտել մասնավոր կապիտալիստական յուրացման շահերի հետ: Բուրժուական սեկտանության հարբերությունները բացաղձակուպես անհամատեղելի յեն դարձել ժողովրդական մասսաների կենտական շահերի հետ: Հասարակության կյանքն անհամատեղելի յե դառնում բուրժուաղիայի հետադա տիրապետության հետ: Այդ հակասությունն ամբողջ կապիտալիստական սխտոնի ընդհանուր ճղնաժամի անտեսական հիմքն է կարգում: Նա վկայում է այն մասին, վոր կապիտալիզմը մր մորպես անտեսության սխտոն մատնված է անխուսափելի կործանման: Դրա համար ել Լենինն ասում է, վոր իմպերիալիզմը հասցրել է «ամբողջ մարդկությանն անդնդի յեզրին, ամբողջ

5) Ի. Ստալին. «Լենինիզմի հարցերը», էջ՝ 499:

կուլտուրայի կործանմանը, նորից միլիոնավոր մարդկանց, անթիվ միլիոններին՝ վայրենացմանը և կործանմանը: Յեւթ չկա՝ բացի սրբախորհրդան հեղափոխութիւններից»):

Բուրժուազիան ուժ չունի կանգնեցնելու կապիտալիզմի արդեն սկսած խորտակումը, ուժ չունի հաղթահարելու իր տնտեսութեան իր իսկ սխտեմի ճգնաժամը: Կապիտալիզմն իր սկսած կործանումից փրկելու ուժ չունի նույնպես և բուրժուազիայի դիւստրի շոկատը — Ֆաշիզմը և նրա յեղաշար — սոցիալ — ֆաշիզմը:

Սոցիալ — ֆաշիզմը հետպատերազմյան շրջանում հանդես եկեալ վորպես գլխավոր սոցիալական հենարանը բուրժուական կարգերի: Յեթն չլինել սոցիալ — դեմոկրատիայի առաջնորդների դաւաճանատեան դերը, բուրժուազիայի իշխանութիւնը վաղուց տապալված կլինէր: Սոցիալ — դեմոկրատիայի առաջնորդներին ռեակցիոն, դաւաճանատեան դերն սփելի ու սփելի պարզ և գտնուում աշխատավորների ամենալայն մասսաների համար: Մայ. — դեմ. կուսակցութիւնները ապրում են քաջբաժան շրջան: Գրանուղ իսկ կործանվում և բուրժուազիայի գլխավոր սոցիալական հենարանը բանվոր դասակարգի շարքերում:

Կապիտալիզմի հարաբերական կայունացումը վերջացել է: Կապիտալիստական աշխարհը մտնում է հեղափոխութիւնների և պատերազմների նոր շրջանի մեջ: Կապիտալիզմի ամբողջ սխտեմի ճգնաժամը բարձրանում է նոր, սփելի բարձր աստիճանի վրա:

Բայց այդ, հատկանալի յե, չի նշանակում, վոր բուրժուական կարգերը կկործանվեն իրենք իրենց, ավտոմատիկ կերպով, վոր հեղափոխութիւնն ի՛նքը կզա «ինքնահասի կարգով»:

Լենինն ու Ստալինը կոմունիստական կուսակցութիւններին և բանվոր դասակարգին բարձր անդամ նախադրուշացրել են, վոր «հեղափոխութեան հաղթանակը յերեք ինքը չի գալիս: Նըրան պետք է նախապատրաստել և նպաճել: Իսկ նախապատրաստել և նպաճել նրան կարող է միայն ուժեղ սրբախորհրդան հեղափոխական կուսակցութիւնը»⁶⁾):

Բուրժուական կարգերն ամբողջ կապիտալիստական աշխարհում խորագուն ճգնաժամ են ապրում: Իմպերիալիզմի դադուրիային ճնշման հակառակ՝ հաղթանակներն դարձանում է հզոր հեղափոխութիւնը Չինաստանում: Փաշիստների ճնշման հակառակ՝ կապիտալիզմի յերկրների ժողովրդական մասսաների մեջ հասունանում է հեղափոխական զբոճի դադախարը: Այդ մասին

պարզ խոսում է Վիեննայի սրբախորհրդան հերոսական ապրումնաթիւնը, բանվոր դասակարգի խոշոր դասակարգային յեյլութեանը Տրանսիայում և այլ յերկրներում: Կապիտալիստական օրնաութիւնների ներքին և արտաքին հակառութիւնները բուրժուազիային հրում են դեպի նոր պատերազմի ուղին և առաջին հերթին՝ ԽՍՀՄ դեմ: Համաշխարհային տնտեսական ճգնաժամը շարունակում է փչրել բուրժուական եկոնոմիկայի ամենախորը հիմքերը և փլուզում նրա Ֆինանսները: Կապիտալիզմի տնտեսական ամենամեծ ճգնաժամին հակադիր կանգնած է ժողովրդական տնտեսութեան հզոր վերելքը և բուռն աճը ԽՍՀՄում:

Սրանք բոլորը գործունեք են, վոյունք շափազանց խորացնում և արում են կապիտալիստական սխտեմի ընդհանուր ճգնաժամը: Բուրժուական աշխարհը մտնուղ է հեղափոխութիւնների և պատերազմների նոր շրջանի մեջ: Բայց այս բոլորը չի նշանակում, վոր կապիտալիզմը կկործանվի և կընկնի ինքն իրեն: Իզուր չէ, վոր ընկ: Ստալինը կուսակցութեան 17-րդ համագումարի ուժերովից հիշեցրել է մեր կուսակցութեանը, այլև բոլոր յեղաշարական կոմունիստական կուսակցութիւններին՝ Լենինի կոմիտեներին 2-րդ կոնգրեսում արտասանած իմաստուն խոսքերը, թե «բուրժուական կարգերն ամբողջ աշխարհում մեծադուն հեղափոխական ճգնաժամ են ապրում: Պետք է «ապացուցել» հիմա հեղափոխական կուսակցութիւնների սրբախորհրդան, վոր նրանք բախականաչափ գիտակցութեան, կողմակերպութեան յուսով, շահագործվող մասսաների հետ կապ, վճարականութեան, կարողութեան ունեն, վորպեսզի այդ ճգնաժամն ոգտադործեն հաջող, հաղթական հեղափոխութեան համար»⁸⁾):

Պրոլետարական հեղափոխութեան հաղթանակը կապիտալիզմի և ֆաշիզմի հանդեպ՝ պետք է նախապատրաստել և նպաճել: (ՊՐԱՎԴԱ, 21 ՄԱՐՏԻ, 1934 Թ.)

6) Լենին. հատոր XX էջ՝ 134:

7) Ի. Ստալին: Հաշվառու գեկուցում 17-րդ համագումարին էջ՝ 17:

8) Լենին. հատոր 25-րդ, էջ՝ 340-341.

II. ԿԱՊԻՏԱԼԻԶՄԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿՐԻՋԻՍԸ ՅԵՎ ՀԱՍԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՀԵՂԱՓՈՒՍՈՒԹՅԱՆ ԱՌՍՋԻՆ ՓՈՒԼԸ

I. ՀԱՍԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ ՅԵՎ ՀԵՂԱՓՈՒՍԱԿԱՆ ԿՐԻՋԻՍԻ ԸՆԹԱՑՔԸ

Իմպերիալիստական պայքարը կապիտալի խոչորագույն պետությունների միջև աշխարհի նոր վերարաժառանգան համար հասցրեց առաջին համաշխարհային իմպերիալիստական պատերազմին (1914—1918 թ.թ.): Այդ պատերազմը ցնցեց համաշխարհային կապիտալիզմի ամբողջ ախտեմը և սկիզբ դրեց նրա ընդհանուր կրիզիսի շրջանին: Նա իրեն է ապա դրեց պատերազմող յերկրներին ամբողջ ժողովրդատնտեսությունը, ստեղծելով պետական կապիտալիզմի դրահապառ բուռնցքը, անարտադրողական ծախսերը հասցրեց վիթխարի չափերի, վաճառքից ահադին քանակություններ արտադրություն միջոցներ և բանվորական կենդանի ուժ, առկրեց ժողովրդական լայն մասսաներին, անհամար դժվարություններ ստեղծեց ինդուստրիալ բանվորների, դյուրացիների, գաղութային ժողովուրդների համար: Նա անխուսափելիորեն սրեց դասակարգային կոնֆլիկտը, վորը վերաճեց և դարձավ մասսաների բացահայտ հեղափոխական յերույթներ և քաղաքացիական պատերազմ: Իմպերիալիստական Ֆրոնտը պատմեց իր պեճեռաթույլ ողակի մեջ — ցարական Ռուսաստանում: 1917 թվականի Փետրվարյան հեղափոխությունը տապալեց խոչոր — կարճամտախրական ինքնակալությունը ներառելու ատելությունը: Հոկտեմբերյան հեղափոխությունը տապալեց բուրժուազիայի տիրապետությունը: Այդ հողթական պրոլետարական հեղափոխությունը եքսպրոպրիացիայի յենթարկեց եքսպրոպրիատորներին, բուրժուազիայի և կարճամտախրերից յուրեց պրոտադրություն միջոցները, մարքեդային պատմություն մեջ առաջին անգամ ստեղծեց և ամբաստեց պրոլետարիատի դիկտատուրան ահադին յերկրում, կյանքում մարմնացրեց պետություն նոր, խորհրդային տիպ և սկիզբ դրեց պրոլետարիատի միջազգային հեղափոխություն:

Համաշխարհային ամբողջ կապիտալիզմի հզոր ցնցման, դասակարգային պայքարի սրման հիմքի վրա և պրոլետարիատի

հեղափոխության հեղափոխություն անմիջական ազդեցություն տակ տեղի ունեցան մի շարք հեղափոխություններ և հեղափոխական յերույթներ թե Յելրոպայի մայր ցամաքում, թե գաղութային ու կիսագաղութային յերկրներում՝ 1918 թ. հունվարին — բանվորական հեղափոխությունը Ֆինլանդիայում. 1918 թ. ոգոստոսին — ալաբա կոչված «բրնձային արտամրուխյունները» Ճապոնիայում. 1918 թվի նոյեմբերին — Ալատրիայի և Գերմանիայի հեղափոխությունները, վորոնք տապալեցին կիսաֆեոդալական միապետությունների սեժիմը. 1919 թ. մարտին — պրոլետարական հեղափոխությունը Հունգարիայում և արտամրուխյունը Կորեայում. 1919 թվի ապրիլին — խորհրդային իշխանությունը Բանարիայում. 1920 թ. հունվարին — ազգային-բուրժուական հեղափոխությունը Տանկաստանում. 1920 թ. սեպտեմբերին — Ֆարրիկաների դրափումը բանվորների կողմից Իտալիայում. 1921 թ. մարտին — տաջափոր բանվորների արտամրուխյունը Գերմանիայում. 1923 թ. սեպտեմբերին — արտամրուխյունը Բուլղարիայում. 1923 թ. աշնանը — հեղափոխական կրիզիսը Գերմանիայում. 1924 թ. դեկտեմբերին — արտամրուխյունը Եստոնիայում. 1925 թ. ապրիլին — արտամրուխյունը Մարոկկոյում. ոգոստոսին — Սիրիայում. 1926 թ. մայիսին — ընդհանուր գործադուլը Անգլիայում. 1927 թ. հուլիսին — բանվորների արտամրուխյունը Վիեննայում: Այս բոլոր փաստերը և վիթխապես, այնպիսի անցքերն, ինչպես արտամրուխյունը Ինդոնեզիայում, խորը իմոթումը Հնդկաստանում, չինական Մեծ հեղափոխությունը, վորը ցնցեց ասիական ամբողջ մայր ցամաքը, մեկ միջազգային — հեղափոխական շրթայի ողակներ են, կապիտալիզմի խորագույն ընդհանուր կրիզիսի բազիկացուցիչ մասերը: Այդ միջազգային հեղափոխական պրոցեսն ընդգրկել է և անմիջական պայքարը պրոլետարիատի դիկտատուրայի համար, և ազգային ազատագրական պատերազմները, և գաղութային արտամրուխյուններն յերկրում իմպերիալիզմի, վորոնք անխղիճորեն շարկաբաժն են դյուրացիության միլիոնավոր մասսաների ազրաբային շարժման հետ: Այսպիսով, մարքեդության ահադին մասսաները ներդրաբաժն են հեղափոխական հեղեղատի մեջ: Համաշխարհային արտամրուխյունը մտել է իր զարգացման նոր փուլի մեջ, կապիտալիստական սխտեմի ընդհանուր տեսական կրիզիսի փուլի մեջ: Ընդամին համաշխարհային տնտեսություն միասնականությունն իր արտահայտությունն է գտել հեղափոխության միջազգային ընույթի մեջ, իսկ նրա առանձին մասերի զարգացման անհամաչափությունը — առանձին յերկրների հեղափոխությունները տարբեր ժամանակներում կատարելու մեջ:

Կապիտալիզմը սուր կրիզիսի (1918—1921 թ. թ.) հիմքի վրա առաջացած՝ հեղափոխական հեղաշրջման առաջին փորձերը վերջացան պրոլետարիատի ղեկառնությունը հաղթանակով ու ամբաստանաբար ԽՍՀՄ-ում և պրոլետարիատի պարտուժյամբ մի ամբողջ շարք այլ յերկրներում: Այդ պարտուժյունները նախ և առաջ հետևանք են սոցիալ - դեմոկրատական առաջնորդների և արհեստակցական շարժման ուժեղացման լիզերների դավաճանական տակտիկայի, նմանապես և արդյունք աչխ հանգամանքի, զոր կոմունիստները հետևելով դեռևս զկար բանվոր դատակարգի մեծամասնությունը, և մի շարք կարևորագույն յերկրներում առհասարակ դեռևս գոյություն չունեցին կոմունիստական կուսակցություններ: Այդ պարտուժյունների հիմքի վրա, վերջինք տեղեկցին պրոլետարիատի գաղութային ժողովուրդների մասսաների աշխատանքի շարժումը հնարավորություն, նրանց կենտոնական մակարդակի յոխտ յեջեցման հիմքի վրա բուրժուազիան հաստի կապիտալիստական հարաբերությունների մասնակի կաշտնացման:

2. ՀԵՂԱՓՈՒՍԱԿԱՆ ԿՐԻԶԻՍԸ ՅԵՎ ՀԱԿԱՀԵՂԱՓՈՒՍԱԿԱՆ ՍՈՑԻԱԼ-ԴԵՄՈԿՐԱՏԻԱՆ

Միջազգային հեղափոխության ընթացքի մեջ ակտիվ կերպով հեղափոխության դեմ պայքարող կապիտալիզմի մասնակի կայուն հաջմանը սատարող խոշորագույն հակահեղափոխության ուժի հատուկ նշանակություն ստացան սոցիալ - դեմոկրատական կուսակցությունների և ուժեղացման արհեստակցական միությունների ղեկավար կազմերը, իսկ մյուս կողմից - կապիտալիստական ֆալսիտական տիպի մարտական կազմակերպությունները:

1914—1918 թ. թ. պատերազմական կրիզիսին ուղեկցեց սոցիալ-դեմոկրատական Յ. Ե. Կ. Ս. Ս. Ինտերնացիոնալիստական իրադրական փոփոխությունը: Լիտվին հակապետիկ Մարքս-Ենգելսի «Կոմունիստական մանիֆեստի» աչխ թեզիսին, թե կապիտալիզմի որով պրոլետարները հայրենիք չունեն, լիտվին հակասելով Ետոլուգարտի և Բաղելի կոնգրեսների հակապատերազմական բանաձևերին՝ արդյունք սոցիալ - դեմոկրատական կուսակցությունների լիզերները, յերակի բացառություններով, ջիկար կեցին հողատ պատերազմական վարկերի, միտակցություն արտահայտիցին հողուն իմպերիալիստական «հայրենիքները» (այսինքն իմպերիալիստական բուրժուազիայի պետական կազմակերպությունների) պաշտպանության և, փոխանակ կոմիտե իմպերիալիստական պատերազմի դեմ, դարձան նրա հալատարիք զին փորները, պրոպագանդիստներն ու յերկրները (սոցիալ - հայրենիքները):

Կապիտալիզմը, վոր վերածում և և դատում սոցիալ-իմպերիալիզմի: Հետևյալ շրջանում սոցիալ - դեմոկրատիան սատարում էր հակապետական պայքարներին (Բրեստ, Վերսալ), նա հանդես էր դաշխ փորպես ակտիվ ուժ ղեկնարկների կողմը՝ պրոլետարիան սարսամբությունների արյունոտ ճնշման ժամանակ (Ետելի). — նա զինյաժ պայքար մղեց պրոլետարական առաջին հանրապետության դեմ (Սորհրդային Ռուսաստան). նա դավաճանորեն մատնում էր իշխանությունը նվաճած պրոլետարիատին (Հունարիա), նա մտալ իմպերիալիստական Արդերի Արդայի մեջ (Թոմաս, Պոլ Բոնկուր, Վանդերլիք): նա ուղղակի իմպերիալիստական սարկատերերի կողմն էր բռնում ընդդեմ պայութային սարկերների (Անգլիական Բանվորական Կուսակցությունը): նա ակտիվ կերպով սատարում էր բանվոր դատակարգի ամենաիսկիցին դահիճներին (Բորդարիա, Լեհաստան). նա իր վրա յեր վերցնում իմպերիալիստական «ոսղմական որկնքների» նախաձեռնությունը (Ծրանիա). նա դավաճանեց անգլիական պրոլետարիատի ընդհանուր մեծ դարձագույլին. նա ուղեկց յեղդերու հանքային բանվորների գործադուլը: նա ուղեկց և ուղեկց է յեղդելու Չինաստանն ու Հնդկաստանը (Մակդոնարդի կառավարությունը): նա իմպերիալիստական Արդերի Լիդայի սրտպա պանդիստ և, կապիտալի մունետիկը և կապակերպող ուժը ԽՍՀՄ-ի պրոլետարիատի ղեկառնության դեմ մղող պայքարում (Կուսակցի, Հիլիերդի):

Միտեմատիկորեն անցկացնելով այդ հակահեղափոխական քաղաքականությունը, սոցիալ - դեմոկրատիան գործում է իր յերկու թևով: սոցիալ - դեմոկրատիայի բացահայտ հակահեղափոխական, աջ թևն անհրաժեշտ է բուրժուազիայի հետ բանակցություններ վարելու և անմիջական կապի համար, «մախր» — բանվորների առանձնապես նուրբ յարելության համար: «Զախ» սոցիալ - դեմոկրատիան, վոր պայքիֆիստական, իսկ յերբմն նույնիսկ հեղափոխական ֆրադի հետ և յաղում, իրոք հանդես է դալխ բանվորների դեմ, մանապես ամենակրիտիկական մոմենտներին (անգլիական «անկախները» և Բրիտոհրդայի «ճախ» առաջնորդները 1926 թ. ընդհանուր գործադուլի ժամանակ, Ռոտո Բուրերն ու Ընկ. Վիննայի սպասամբության ժամանակ և այլն), ուստի սոցիալ - դեմոկրատիան կուսակցությունների ա մենից վտանգավոր ֆրակցիան և հանդիսանում: Սպասարկելով բանվոր դատակարգի շարքերում բուրժուազիայի շահերին յեվ ամբողջովին կանգնած լինելով բուրժուազիայի հետ դատակարգային համապարձակցություն ու կոալիցիա տեղեկյա դադալարի հողի վրա, սոցիալ - դեմոկրատիան վորոչ ժամանակաշրջան

ներում հարկադրված է լինում անցնել ուղղիցիոն կուսակցու-
թյան դրուժյան և անդամ սրբուհարիատի դասակարգային շա-
հերի պաշտպանութունը ձևացնել նրա տնտեսական կախում մի-
այն այն նպատակով, վոր դրանով բանվորության մի մասի վրն
տահուժյունը նվաճելով, ևլ ավելի ամոթալի կերպով դասաճա-
նի նրա տեսական շահերն, մանավանդ դասակարգային վճառ-
կան ճակատամարտերի ժամանակ:

Սոցիալ-դեմոկրատիայի հիմնական դերն այժմ այն է, վոր
ջրատի սրբուհարիատի անհրաժեշտ, մարտական միանականու-
թյունը իմպերիալիզմի դեմ ուղղված նրա պայքարում: Կապիտա-
լի դեմ մղվող սրբուհարական պայքարի միանական ճակատը
պատակաւելով ու քաջբայելով, սոցիալ-դեմոկրատիան իմպերիա-
լիզմի գլխավոր նեցունն է հանդիսանում բանվոր դասակարգի
մեջ: Բոլոր յերանգների միջադրային սոցիալ - դեմոկրատիան,
Յերկրորդ Ինտերնացիոնալն ու նրա արհեստակցական Փիլիալ բա-
ժանումները, արհմիությունների Սեպտեբրեմի միտիորությունը,
արաբիտով, դարձան բուրժուական հասարակության ռեզերվը,
նրա ամենից հալատարիմ հենարանը:

3. ԿԱՊԻՏԱԼԻՉՄԻ ԿՐԻՉԻՍՐ 3ԵՎ ՖԱՇԻՉՄՐ

1. Սոցիալ - դեմոկրատիայի կողքին, վորի ողնությամբ
բուրժուակյան ճնշում և բանվորներին կամ քնեղնում նրանց դա-
սակարգային աշարջությունը, հանդես է դալիս Փաշիզմը

Իմպերիալիզմի դարաշրջանը, դասակարգային կռիվ սրումն
ու քաղաքացիական պատերազմի տարրերի աճումը, մանավանդ
համաշխարհային իմպերիալիստական պատերազմից հետո, սնան
կազման հասցրին պատճառներով: Սրանից ստաշացան կա-
ռապարման «նոր» մեթոդներ ու ձևեր (որինակ, վորք կարմնեո-
ների սխտեմը, անդրկուլիսյան ոլիգարխիստական իմբակների բա-
տեղծումն, «ժողովրդական ներկայացուցչության» դերի անկու-
մբն ու կեղծումը, «դեմոկրատական արատությունների» կրճա-
տումն ու վոճնացումը և այլն): Բուրժուական - իմպերիալիս-
տական ռեակցիայի առաջիտարցման այդ պրոցեսը պատճական
ստանձնահատուկ պայմանների պարագայում ստանում է Փա-
շիզմի ձև: Այդպիսի պայմաններ հանդիսանում են՝ կապիտա-
լիստական հարաբերությունների անկալունությունը. սոցիալա-
կան ապագասակարգայնացած բաղմաթիվ տարրերի առկայու-
թյունը, քաղաքային մանր բուրժուակյայի և ինտելիգենցիայի
յայն խափերի աղքատացումը, դյուրական մանր բուրժուակյա-
յի դժգոհությունը, վերջապես, սրբուհարիատի մասսայական
յիւղքների շարունակական ապստանալիքը: Վորպեսզի իր համար

ապահովի իշխանության ավելի մեծ կայունությունը, նրա ամ-
բությունն ու մնալունությունը, բուրժուակյան ավելի ու ավելի
հարկադրվում է սրբուհարական սխտեմից անցնելու միջկու-
սակցական հարաբերություններից ու կոմբինացիաներից անկախ
Փաշիստական մեթոդին: Այդ մեթոդը մեթոդն է անմիջական
դիկտատորայի, վոր իդեոլոգիայես թողարկվում է «համարգա-
յին գաղափարով» և «արհեստների» (խակ բառ էլության տերա-
պիտող դասակարգերի զանազան խմբերի) ներկայացուցչու-
թյամբ, մեթոդը՝ ոգտադործելու մանր - բուրժուական, ինտելի-
դենտական և այլ մասսաների դժգոհությունը յուրորինակ սոցիա-
լական դեմագոգիայի միջոցով (անտիսեմիտիզմ, մասնակի հար-
ձակումներ վաշխատուական կապիտալի դեմ, վրդովմունքը պատ-
լամենական «խտարանից») և իշխանության կաշառասիրու-
թյան սխտեմի ողնությամբ, վոր արտահայտվում է Փաշիստա-
կան ջոկատների, կուսակցական ապարատի և աստիճանավորու-
թյան միախառնված ու վարձատրվող հիերարխիայի ստեղծման
մեջ. լուղամին Փաշիզմը ձգտում է թափանցել բանվորական շր-
ջանի մեջ ևս, հավաքագրելով բանվորների ամենից հետամնաց
խալիքը, ոգտադործելով նրանց դժգոհությունը, սոցիալ - դե-
մոկրատիայի կրալորականությունը և այլն: Փաշիզմի դիկտալոր
ինդիքն է բանվորական հեղափոխական ավանդարդի, այսինքն
սրբուհարիատի կոմունիստական խալիքի և նրանց կադրային
կազմի ջախջախումը: Փաշիզմի բնորոշ դժերն են հանդիսանում
սոցիալական դեմագոգիայի, իշխանության կաշառակերության
սխտեմի և ակտիվ ալիտակ տերրորի համակցությունն ու իմ-
պերիալիստական ծայրահեղ աղբախիթությունը արտաքին քաղա-
րականության լնաղալստում: Բուրժուակիայի համար առանձնա-
պես կրիտիկական շրջաններում ոգտադործելով հակահալիտա-
լիստական Փրադարանությունը, Փաշիզմը հաստատուն դերը բա-
տեղծելով պետական իշխանության դեկլե մոտ, ավելի ու ավելի
յի յերևան հանում իրեն վորպես խոշոր կապիտալի տերրորիս-
տական դիկտատորա, ճանապարհին կորցնելով իր հակահալի-
տալիստական ջիլիլիական խաղալիքները:

Համակերպելով քաղաքական կոնյունկտուրայի փոփոխման,
բուրժուակյան ոգտադործում և և Փաշիզմի մեթոդները և սո-
ցիալ - դեմոկրատիայի հետ կոպիցիա կնքելու մեթոդները, բնդ
ամին ինքր սոցիալ - դեմոկրատիան կապիտալիզմի համար ա-
մենից կրիտիկական մոմենտներին հաճախ խաղում է Փաշիստա-
կան դեր: Զարգացման ընթացքում նա յերևան է հանում Փա-
շիստական տեղեկներ, մի բան, վոր չի խանդարում նրան քա-
ղաքական այլ կոնյունկտուրայի ժամանակ դեմ գնալ բուրժուա-

կան կառավարութեան վերջնական որոշումները կուսակցութեան: Յարգելի մեթոդը և սոցիալ - դեմոկրատիայի հետ կոալիցիա կրնա ընդունուի մեթոդը, լինելով արտասովոր մեթոդներ «նորմալ» կապիտալիզմի համար և կապիտալիստական ընդհանուր կրիզիսի հետ կանխելները հանդիսանալով, ոչտաշարժվում են բուրժուազիայի կողմից դանդաղեցնելու համար հեղափոխութեան առաջխաղացքները:

4. ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ԿԱՅՈՒՆԱՅՄԱՆ ՀԱՎԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՅԵՎ ԿԱՊԻՏԱԼԻԶՄԻ ՀԵՂԱՓՈՒՆԱԿԱՆ ԱՆԿՄԱՆ ԱՆԵՈՒՍԱՓԵՎԻՈՒԹՅՈՒՆԸ

Հետպատերազմային ամբողջ պատմական շրջանի մորթն սպաքցուցում է, վոր բանվոր դասակարգի վերաբերմամբ դարձադրած դաժան միջոցներով ու նրա կենսական մակարդակը վրա կատարած սխալմամտիկ ճնշումներով ձեռք բերված կապիտալիզմի տարբերիկացիան չի կարող չլինել մասնակի, ժամանակավոր, կրտած:

Մտերյն տեխնիկայի թուխքակերպ և տեղային դարգացումը, վոր միջանի յերկրներում համուում է տեխնիկական նոր հեղաշրջման աստիճանի, կապիտալի համակենտրոնացման և կենտրոնացման արագացած պրոցեսը, վիթխարի տրեսաները «աղգային» և «ինտերնացիոնալ» մոնոպոլիաների ստեղծումը, տրեսաների և պետական իշխանութեան միակցումը, համաշխարհային կապիտալիստական տնտեսութեան աճումը չեն կարող հաղթահարել կապիտալիստական սխտեմի ընդհանուր կրիզիսը: Համաշխարհային տնտեսութեան սրտակտումը կապիտալիստական յեւ սոցիալիստական հաստիճաների, շտակների նեղացումը, հակաիմպերիալիստական շարժումը գալուիթներում ծայրահեղորեն սրում են նոր, հետպատերազմային հիւքի վրա դարգացող կապիտալիզմի բոլոր հակասութեանները: Ինքը, տեխնիկական սրողքեան ու արդյունարեութեան սոցիոնալիզացիան, վորոնց մյուս կողմը մի շարք ձեւնարեութեանների փակումն և ու լիկվիդացիան, արտագրանքի սահմանափակումը, բանվորական ուժի անինա և դիւշտիչ շահագործումը հասցնում են առաջներում չտեսնված, յերտեխնիկական աճային գործադրելութեան: Փաստ և դատումը բան վոր դասակարգի դրութեան բացարձակ վատթարացումը նույնիսկ մի շարք դարգացած կապիտալիստական յերկրներում: Իմպերիալիստական յերկրների միջև դոյութեան ունեցող մրցութեան աճումը և սրտերարգի մշտական սպառնալիքը, դասակարգային կոնֆլիկտների աճող լարվածութեանը նախարդյաներ են ստեղծում կապիտալիզմի ընդհանուր կրիզիսի և համաշխարհային

վին սրտերտարական հեղափոխութեան դարգացման նոր, ել ասիլի բարձր աստիճանի համար:

Իմպերիալիստական սրտերարգմների առաջին շրջանի (1914—1918 թ. թ. համաշխարհային սրտերարգմը) և Ռուսաստանի ցարի նախկին կայսրութեան մեջ բանվոր դասակարգի տարած Հոկտեմբերյան հաղթութեան հետեանքով համաշխարհային տնտեսութեանը սրտակտուից յերկու սկզբունքորեն թշնամական բանալի՝ Իմպերիալիստական պետութեանը յունենելու բանալի և ՍՍՀՄ սրտերտարիստի դիկտատուրա: Դասակարգային կառուցվածքների տարբերութեանը, իշխանութեան դասակարգային բնութեան տարբերութեանը, սկզբունքային տարբերութեանը ներքին ու արտաքին տնտեսական ու կուլտուրական քաղաքականութեան նպատակների մեջ, ամբողջ դարգացման սկզբունքորեն տարբեր ուղղութեանը խտտ բաղիտում են ստաշացնում կապիտալիստական աշխարհի և հաղթական սրտերտարիստի պետութեան միջև: Մի ժամանակ միասնական: համաշխարհային տնտեսութեան շրջանակներում պայքարում են յերկու հակամարտ սխտեմներ՝ կապիտալիզմի սխտեմը և սոցիալիզմի սխտեմը: Դասակարգային կուլիքը, վոր միջնակ արգիմ մղվում էր այսպիսի ձեւերով, յերբ սրտերտարիստը չունեի յիր պետական իշխանութեանը, ներկայումս վերաբոտարգրում է ահագին, յիրք համաշխարհային մասշտաբով, ընդդմին համաշխարհային բանվոր դասակարգն ունի արդեն յիր պետութեանը, միջարգային սրտերտարիստի միակ հայրենիքը: Սորհրգային Միութեան դոյութեանը նրա համաշխարհային աղքեցութեամբ աշխատավոր և ճնչված մասսաների վրա ինքնին ամենից վատ արտահայտութեանն և համաշխարհային կապիտալիստական սխտեմի կորագույն կրիզիսի և դասակարգային վրալի սրտերտարիստի մեջ դեռեն չեղած ընդլայնման ու սրման:

Անգոր լինելով հաղթահարել յիր ներքին հակասութեանները, կապիտալիստական աշխարհը մորթ մե անում ստեղծելու միջարգային միակերումներ (Աղքերի Լիգա) մի գլխավոր նպատակով՝ կանգնեցնել հեղափոխական կրիզիսի անգուսպ աճումը, բերկալայով կամ սրտերարգմով խեղդել սրտերտարական հանրապետութեանների Միութեանը: Միաժամանակ ՍՍՀՄ չունքն են միախտնվում հեղափոխական սրտերտարիստի և դարգութային ճնչված մասսաների բոլոր ուժերը՝ կապիտալի անհաստատ, ներքից բայքայիող, բայց միջն ատամները գլխված համաշխարհային կուլիցիային հակադրված և աշխատանքի միասնական համաշխարհային կուլիցիան: Այսպիսով իմպերիալիստական սրտերտարգմների առաջին շրջանի հետեանքով ծարկց համաշխարհային սրտերտարիստի և նշանակութեան նոր սկզբունքային հա

ВИБЛІОТЕКА
ІНСТИТУТА
ІСТОРИЇ
Академія Наук
17

կատու թյունն՝ հարկատու թյունն ԽՍՀՄ և կապիտալիստական աշխարհի միջև:

Մյուս կողմից, սրվեցին նաև հակամարտութ յուննե-րը համաշխարհային տնտեսութ յան կապիտալիստական հատվածի ներսում: Աշխարհի տնտեսական կենտրոնի տեղափոխութ յունն Ամերիկայի Միացյալ Նահանգները, «գլոբալի հանրապետութ յան» համաշխարհային հարստահարիչ դաժնալը սրեցին հարաբերութ յունները Միացյալ Նահանգներին և յեվրոպական կապիտալիզմի, առաջին հերթին Մեծ Բրիտանիայի կապիտալիզմի միջև: Իմպերիալիստական հին պահպանողական յերկրներից ամենահզորի, Մեծ Բրիտանիայի և իր համար արդեն համաշխարհային հեղեմոնիա նվաճած յերխասարգ իմպերիալիզմի խոչորազույն յերկրի, Միացյալ Նահանգների միջև յեղած կոնֆլիկտը դաժնում և ֆինանսական կապիտալի պետութ յուններին միջև տեղի ունեցող համաշխարհային կոնֆլիկտ ներքի առանցքը: Վերտալի հաշտութ յան հեռանքով թնայնալիստ Գերմանիան, վոր անտեսապես ապաքինվել և և վերադին բռնել և իմպերիալիստական քաղաքականութ յան ուղին, նորից հանդես և գալիս վորպես յուրջ մրցակից համաշխարհային շուկայում: Սաղաղ ովկիանոսում ստեղծվում և հակասութ յուններին հանգուցը, վորոնց գլխավոր հիմքը կազմում և ամերիկական-ճապոնական կոնֆլիկտը: Այս հիմնական հակամարտութ յուններին կողքին զարգանում են շահերի հակասութ յունները պետութ յուններին փոփոխվող և անկայուն իմպերիալիզմների միջև, ընդդմից յերկրորդական պետութ յուններն ոժանդակ գործիքների դեր Խնխադում իմպերիալիստական հակաների և նրանց՝ կոպիտալիստների ձևերին:

Համաշխարհային կապիտալիզմի արդյունաբերական ապարատի արտադրական ունակութ յան աճումը՝ պատերազմի հետևանքով Յեկոպույում նեղացած ներքին շուկաների պարագայում, գուռ կապիտալիստական շրջանառութ յունից Խորհրդային Միութ յան դուրս գալուց հետո, հումութ յային և վառելիքային կարևորագույն արքյուրների ծայրահեղ մոնոպոլիզացիայի պայմաններում՝ ունի այն հետևանքը, վոր կապիտալիստական պետութ յուններին կոնֆլիկտները ծավալվում են: «Մարդը» պայքարը նավթի, կառուցուկի, բամբակի, ածուխի, մետաղի համար, շուկաների, կապիտալների ներդրման շրջանների նոր վերարժանման համար անխուսափելիորեն տանում և դեպի համաշխարհային նոր պատերազմ, վորն այնքան ավերիչ կլինի, վոր քան մեծ են կատաղի կերպով զարգացող ռազմական տեխնիկայի հաջողութ յունները:

Միաժամանակ աճում են հակասութ յունները մետրոպոլիտաների և գաղութային ու կիսագաղութային յերկրների միջև: Պատերազմի հետևանքով նկատվող յեվրոպական իմպերիալիզմի վորոշ թուլացումը, կապիտալիզմի զարգացումը գաղութներում, խորհրդային հեղափոխութ յան ազդեցութ յունը, կենտրոնախույս տեղեկցները ծովային յեվ գաղութային դիսպորագույն պետութ յան — Մեծ Բրիտանիայի ներսում (Կանադա, Ավստրալիա, Հարավային Աֆրիկա) — հեշտացրին ապստամբութ յունների բնկոմր գաղութներում և կիսագաղութներում: Չինական Մեծ հեղափոխութ յունը, վոր շարժման մեջ դրեց հարյուրավոր միլիոն չին ժողովուրդը, ահադին ճեղքվածք և նշանակում իմպերիալիզմի ամբողջ սիստեմում: Անընդհատ հեղափոխական իմորումը հարյուրավոր միլիոն հնդկական բանվորների և դյուղացիների մեջ սպանում և խորտակել իմպերիալիզմի համաշխարհային միջնաբերդի — Մեծ Բրիտանիայի տիրապետութ յունը: Լատինական Ամերիկայի յերկրներում Միացյալ Նահանգների հզոր իմպերիալիզմի դեմ ուղղված տեղեկացների աճումը հանդիսանում և մի ուժ, վորը կասեցնում և հյուսիս-ամերիկյան կապիտալի եքսպանսիան: Այդպիսով յերկրագնդի բնակչութ յան հակայական մեծամասնութ յունն իմպերիալիզմի դեմ ուղղված պայքարի մեջ ներգրավող հեղափոխական պրոցեսը գաղութներում — այն մեծամասնութ յան, վոր յինթարկված և իմպերիալիզմի մի քանի յուշորագույն «մեծ պետութ յունների» ֆինանսական-կապիտալիստական ոլիգարխիային, նույնպես հանդիսանում և կապիտալիստական սիստեմի ընդհանուր խոր կրեղիսի արտահայտութ յունը: Բայց Յեվրոպայում ևս, վորտեղ իմպերիալիզմն իր ծանր կրնկիտակ և դերի մի շարք փոքր ազգերի, ազգային հարցը հանդիսանում և մի գործոն, վորը սրում և կապիտալիզմի ներքին հակասութ յունները:

Վերջապես, հեղափոխական ճգնաժամն անխուսափելիորեն հասունանում և և իմպերիալիզմի բուն կենտրոններում. բուրժուազիայի հարձակումը բանվոր դատակարգի վրա, նրա կենսական մակարդակի վրա, նրա կազմակերպութ յունների, նրա քաղաքական իրավունքների վրա, և սպիտակ տերրորի աճումը զարգացող դիմադրութ յունն են առաջ բերում պրոլետարիատի լայն մասսաների կողմից և դատակարգային կովի սրբումն բանվոր դատակարգի ու տրեստիֆիկացիայի յինթարկված կապիտալի միջև: Աշխատանքի վիթխարի ճակատամարտերը կապիտալի դեմ. մասսաների ճախացման ուժեղացող պրոցեսը, կոմունիստական կուսակցութ յունների ազդեցութ յան և հեղինակու-

թյան աճումը, բանվորական ամենայն մասսաների համադրանքների աճումը պրոլետարական դիկտատուրայի յերկրի նկատմամբ, — այս ամենը պարզ նշում և հեղափոխական նոր վերելքի հասունացումն իմպերիալիզմի կենտրոններում :

Այսպես, ուրեմն, համաշխարհային իմպերիալիզմի սխտեմը, իսկ նրա հետ միասին և կապիտալիզմի մասնակի կալուենացումը հյուժվում են պանազաի ծայրերից՝ իմպերիալիստական պետությունների միջև յեղած հակասությունների և կոնֆլիկտների կողմից. գաղութների՝ կոպի յեկնող միլիոնավոր մասսաների կողմից. մետրոպոլիաների հեղափոխական պրոլետարիատի կողմից. վերջապես, ամբողջ համաշխարհային հեղափոխական շարժման հեղեմունի—ԽՍՀՄ հաստատված պրոլետարական դիկտատուրայի կողմից : Միջազգային հեղափոխությունը զարգանում է :

Նրա դեմ իր ուժերն և հալածում իմպերիալիզմը : Իմպերիալիզմն որակարգի մեջ է դնում երապեղիցիաներն ընդդեմ գաղութների, համաշխարհային նոր պատերազմ, արշավանք ԽՍՀՄ դեմ : Դա անխուճափեկիտրեն հետևանք կունենա միջազգային հեղափոխության բոլոր ուժերի արձակումն ու կապիտալիզմի անկանխելի կործանումը :

(Կոմունիստական Ինտերնացիոնալի ծրագրից)

<< Ազգային գրադարան



NL0185146

MAY 1934

ՀԱՅ ԿՈՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ГСС ЕВРОПЕЙС

ՀԱՍՈՒ-ԱՐՄ ԵՍՐ

ՀԱՅ ԿՈՆ ԳՐԱԴԱՐԱՆ

այսինքն իմրագրեց՝ ՇԱԼՈՒՆՆ
պարգամեց՝ Ս. ԱՃՆՄՅԱՆ
Տեխ. իմրագիր՝ Կ. ԹԱՈՒԱՆՅԱՆ

Методбюро ЦК и БК АКП (б)

ЗАДАНИЕ

Для всей сети партийного просвещения

Тема: ВСЕОБЩИЙ КРИЗИС КАПИТАЛИЗМА

Партиздат—Баку—1934 г.